

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը 2016/2017 ուսումնական տարվա հեռակա ուսուցման համար հայտարարում է բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելություն՝ հետևյալ կրթական ծրագրերով.

Բակալավրի կրթական ծրագիր

Աղյուսակ 1.1

Շիֆր	Մասնագիտություն	Քննություններ			Ընդամենը տեղեր	Այդ թվում՝ ԲԶ	Ուսման վարձ /դրամ/
		Մ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)			
031101. 00. 6	Տնտեսագիտություն	Մ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)	100	4	450 000
041101. 00. 6	Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի)	Մ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)	100	4	450 000
041201. 00. 6	Ֆինանսներ (ըստ ոլորտի)	Մ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)	100	4	450 000
041301. 00. 6	Կառավարում (ըստ ոլորտի)	Մ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)	100	4	450 000
041401. 00. 6	Շուկայագիտություն /մարքեթինգ/ (ըստ ոլորտի)	Մ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)	50	2	400 000
056201. 00. 6	Վիճակագրություն	Մ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)	25	1	350 000
ԸՆԴԱՄԵՆԸ՝					475	19	

ՀՊՏՀ ԳՅՈՒՄՐՈՒ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՍԲ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ 2016/2017 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐԸ ԵՎ ՎԱՐՁԱՉԱՓԵՐԸ

Աղյուսակ 1.2

N	Դասիչը	Մասնագիտությունը	Ընդամենը տեղեր	Այդ թվում՝ ԲԶ	Քննություններ			Ուսման վարձ /դրամ/
					Մ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)	
1	041101. 00. 6	«Հաշվապահական հաշվառում և հարկում» (ըստ ոլորտի)	25	2	Մ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)	380 000
2	041201. 00. 6	«Ֆինանսներ» (ըստ ոլորտի)	25	2	Մ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)	380 000
3	041301. 00. 6	«Կառավարում» (ըստ ոլորտի)	20	2	Մ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)	380 000
ԸՆԴԱՄԵՆԸ՝			70	6				

ՀՊՏՀ ԵՂԵԳՆԱԶՈՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՀԵՌԱԿԱ ՌԻՍՈՒՑՄԱՍԲ ԲԱԿԱԼԱՎՐԻ
ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ 2016/2017 ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ
ՏԵՂԵՐԸ ԵՎ ՎԱՐՁԱՉԱՓԵՐԸ

Աղյուսակ 1.3

N	Դասիչը	Մասնագիտությունը	Ընդամենը տեղեր	Այդ թվում՝ ԲԶ	Քնություններ			Ուսման վարձ /դրամ/
					Մ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)	
1	041201. 00. 6	«Ֆինանսներ» (ըստ ոլորտի)	20	2	Մ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)	300 000
2	041301. 00. 6	«Կառավարում» (ըստ ոլորտի)	20	2	Մ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)	300 000
ԸՆԴԱՄԵՆԸ			40	4				

Բակալավրիատի դիմորդների փաստաթղթերն ընդունվում են 2016թ. օգոստոսի 25-ից մինչև սեպտեմբերի 25-ը ներառյալ.

Դիմումի հետ ներկայացվում են.

ա/ միջնակարգ կրթության վկայականը (ատեստատը) կամ միջին մասնագիտական և նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության մասին փաստաթուղթը (դիպլոմը) (բնօրինակ),

բ/ 6 լուսանկար (3x4սմ չափսի),

գ/ անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր, զինվորական գրքույկ, ծննդյան վկայական, փախստականի վկայական, ՀՀ հատուկ անձնագիր, կացության վկայական),

դ/ զինվորական գրքույկ և զինվորական կոմիսարիատից տեղեկանք՝ ժամկետային զինվորական ծառայությունն անցնելու մասին կամ կցագրման վկայական

ե/ ՀՀ օրենսդրությամբ սահմանված արտոնություններից օգտվող դիմորդները ներկայացնում են համապատասխան փաստաթղթեր (1-ին կամ 2-րդ խմբի և մինչև 18 տարեկան մանկուց հաշմանդամության, ՀՀ պաշտպանության ժամանակ զոհված (մահացած) զինծառայող ծնողի զոհվելու, ժամկետային զինվորական ծառայության պարտականությունները կատարելիս հաշմանդամ դառնալու, առանց ծնողական խնամքի մնացած՝ մինչև 23 տարեկան երեխա լինելու մասին),

զ/ միջազգային և հանրապետական մրցույթների (օլիմպիադաներ, փառատոններ), դիպլոմները,

է/ 2016, ինչպես նաև 2015 թվականի «Հայոց լեզու և գրականություն», «Օտար լեզու (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն)» և «Մաթեմատիկա» առարկաների ավարտական միասնական քննությունների վկայագիր՝ դրանց առկայության դեպքում:

Դիմորդները քննություն են հանձնում <<Մաթեմատիկա>>, <<Հայոց լեզու և հայ գրականություն>> և <<Օտար լեզու>> (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, ռուսերեն) առարկաներից: Եթե դիմորդը մասնակցել է 2015 կամ 2016 թվականների միասնական քննություններին և ստացել է դրական միավորներ (7.5 և բարձր միավոր), ապա մրցույթին կարող է մասնակցել այդ միավորներով: Դիմորդներն իրավունք ունեն պահպանելով միասնական քննությունների գնահատականները՝ հանձնել այդ առարկաների քննությունները և մրցույթին մասնակցել տվյալ առարկայի առավելագույն միավորով:

Այն դեպքում, երբ դիմորդը ստանում է ավելի բարձր գնահատական, հաշվի է առնվում հանձնած քննության արդյունքը:

2015թ. և 2016թ. «Հայոց լեզու և գրականություն», «Օտար լեզու (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն)» և «Մաթեմատիկա» առարկաներից միասնական քննություն չհանձնած կամ վերահանձնել ցանկացող դիմորդները քննություն են հանձնում Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում՝ այդ առարկաների միասնական քննություններին ներկայացվող պահանջներին համապատասխան:

Քննություններն անց են կացվում 2016 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև հոկտեմբերի 17-ը:

Հեռակա ուսուցման բակալավրիատում ուսման տևողությունը հինգ տարի է:

Լրացուցիչ տեղեկություններ կարելի է ստանալ ՀՊՏՀ-ի ընդունող հանձնաժողովից:

Մեր հասցեն՝ ք. Երևան, Նալբանդյան 128, հեռ. 59-34-73:

Հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի դիմորդների փաստաթղթերն ընդունվում են 2016թ. օգոստոսի 25-ից մինչև սեպտեմբերի 25-ը ներառյալ:

Մագիստրոսի կրթական ծրագիր

Աղյուսակ 2.1

Ծածկագիրը	Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան/մասնագիտություն	Տեղերը	Ուսման վարձ /դրամ/
031101. 04. 7	Միջազգային տնտեսական հարաբերություններ	20	470000
031101. 13. 7	Ձեռնարկատիրական գործունեություն	20	470000
031101. 15. 7	Տնտեսության պետական կարգավորում	20	470000
041101. 01. 7	Հաշվապահական հաշվառում (ըստ ճյուղերի)	25	470000
041101. 03. 7	Աուդիտ	25	470000
041201. 02. 7	Ապահովագրական գործ	20	470000
041201. 03. 7	Հանրային ֆինանսներ	20	470000
041201. 04. 7	Կորպորատիվ ֆինանսներ	20	470000
041201. 06. 7	Բանկային գործունեության կազմակերպում	20	470000
041301. 03. 7	Պետական և մունիցիպալ կառավարում	20	470000
041301. 04. 7	Գործարար վարչարարություն /կառավարում/	20	470000
041301. 11. 7	Զբոսաշրջության կառավարում	20	470000
041301. 15. 7	Կառավարման տեղեկատվական համակարգեր	20	470000
041401. 03. 7	Մարքեթինգային հետազոտություններ	15	420000
041401. 04. 7	Մարքեթինգային հաղորդակցություններ	15	420000
041401. 05. 7	Կոմերցիա	15	420000
041401. 06. 7	Բիզնեսի կազմակերպում	15	420000
ԸՆԴԱՄԵՆԸ		330	

ՀՊՏՀ ԳՅՈՒՄՐՈՒ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ
ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ 2016/2017 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ
ՏԵՂԵՐԸ ԵՎ ՎԱՐՁԱՉԱՓԵՐԸ

Ծածկագիրը	Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան/մասնագիտություն	Տեղերը	Ուսման վարձ /դրամ/
041101. 01. 7	Հաշվապահական հաշվառում (ըստ ճյուղերի)	20	420000
041201. 03. 7	Հանրային ֆինանսներ	20	420000
ԸՆԴԱՄԵՆԸ		40	

Մրցութային հիմունքներով հեռակա ուսուցման մագիստրատուրա կարող են ընդունվել այն անձինք, ովքեր ունեն ՀՊՏՀ կամ պետական և հավատարմագրված ոչ պետական այլ բուհերի մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի, բակալավրի որակավորման աստիճան:

1. Հեռակա ուսուցման մագիստրատուրայում ուսման տևողությունը 2.5 տարի է:
2. Ընդունելությունն անցկացվում է ըստ կրթության պետական կառավարման լիազոր մարմնի հաստատած ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման (վճարովի) առանց պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքի ուսուցման տեղերի:
3. Մագիստրատուրա ընդունվելու համար ՀՊՏՀ բակալավրիատի շրջանավարտները և դիպլոմավորված մասնագետները մասնագիտությունը փոխելու դեպքում, ինչպես նաև այլ բուհերի շրջանավարտ դիմորդները հանձնում են շեմային քննություն համապատասխան մասնագիտությունների և մասնագիտացումների համալիր հարցաշարերով (հարցաշարերը՝ www.asue.am կայքում):
4. Շեմային քննությունից դրական գնահատական ստանալու դեպքում դիմորդը իրավունք է ստանում մասնակցելու մագիստրատուրայի ընդունելության մրցույթին:
5. ՀՊՏՀ շրջանավարտներն իրենց մասնագիտություններով մագիստրատուրա դիմելու դեպքում, մագիստրատուրա են ընդունվում առանց շեմային քննության:
6. Մագիստրատուրայի ընդունելության մրցույթն անց է կացվում ըստ՝
 - նախորդ ուսումնառության արդյունքում շնորհված դիպլոմի հավելվածի գնահատականների միջինի,
 - մասնագիտական առարկաներից ցուցաբերած առաջադիմության գումարային միջին գնահատականի,

- հրատարակած կամ հրատարակության երաշխավորված գիտական աշխատանքների առկայության,
- ոչ մասնագիտական առարկաներից ցուցաբերած առաջադիմության գումարային միջին գնահատականի,
- շեմային քննության գնահատականի:

7. Պետական և ոչ պետական հավատարմագրված բուհերի մագիստրոսի կամ բակալավրի դիպլոմ ունեցող քաղաքացիների գործերն ընդունվում են 2016թ. օգոստոսի 25-ից մինչև սեպտեմբերի 25-ը ներառյալ:

Պետական և ոչ պետական հավատարմագրված բուհերի մագիստրոսի կամ բակալավրի դիպլոմ ունեցող քաղաքացիները ներկայացնում են.

ա/ դիմում,

բ/ անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր, զինվորական գրքույկ, փախստականի վկայական, ՀՀ հատուկ անձնագիր, կացության վկայական),

գ/ բուհի կողմից տրված դիպլոմ և առաջադիմության թերթիկ և դրանց պատճենները,

դ/ երեք լուսանկար՝ 3x4 սմ չափսի,

ե/ զինվորական փաստաթուղթ,

զ/ՀՀ օրենսդրությամբ սահմանված արտոնություններից օգտվող դիմորդները ներկայացնում են համապատասխան փաստաթղթեր (1-ին կամ 2-րդ խմբի և մինչև 18 տարեկան մանկուց հաշմանդամության, ՀՀ պաշտպանության ժամանակ զոհված (մահացած) զինծառայող ծնողի զոհվելու, ժամկետային զինվորական ծառայության պարտականությունները կատարելիս հաշմանդամ դառնալու, առանց ծնողական խնամքի մնացած՝ մինչև 23 տարեկան երեխա լինելու մասին):

Փաստաթղթերը ընդունվում են ՀՊՏՀ-ում՝ Երևան, Նալբանդյան 128 հասցեում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 593-473:

